№ 210 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7 **1900** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7 № 210

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ». կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ. Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարսկահայերի կրթական գործը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արձագանքներ. Օպերային ներկայացումները։ Նամակ Մոսկվայից. Նամակ կարսից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բաղդադի երկաթուղին. Փաստաբանութիւնը Գանձակում.

## ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ

—

Պարսկահայերի փափագը իրագործվեց։ Պարսից Շահը իր Թաւրիզ եղած ժամանակ ստորագրեց այն կրթական ծրագիրը, որ մշակվել էր Թեհրանում պարսկահայերի մէջ կրթութիւն տարածելու նպատակով։

Այդ ծրագիրը, ինչպէս յայտնի է, դիտաւորութիւն ունի կանոնաւոր և յարատե կազմակերպութիւն տալ դպրոցական գործին, կապ հաստատել զանազան կարգի դպրոցների մէջ, ապահովել դպրոցների նիւթական վիճակը և միջոց տալ բանալու նոր դպրոցներ, ուր նրանք դեռ գոյութիւն չունեն։

Կառավարութիւնը իր կողմից տուեց ծրագրին հաւանութիւն և երկրի Պետը հարկաւոր համարեց յայտնել իր գոհունակութիւնը հայերին՝ նրանց լուսաւոր ձգտումների համար։ Եւ այդպիսով հարցի պաշտօնական մասը ստացաւ իր աջող լուծումը։ Այժմ հանդէս է գալիս նրա աւելի մեծ, աւելի պատասխանատու և աւելի դժուարին մասը, այն է գործնական իրագործութեան խնդիրը։ Պարսկահայերի ղեկավարող շրջանները պարտաւոր են շտապել գործունէութիւն սկսելու և լուրջ խնդրի հիմքը դնելու։

Գործող մարդիկ պարսկահայերի մէջ ներկայումս կենտրոնացած են երկու կէտում՝ Թեհրանում և Թաւրիզում։ Թուցէ ժամանակով սկսի դեր կատարել և Նոր-Ջուղան, բայց այժմ նա ղեկավարողի պաշտօնից դեռ հեռու է։ Ուստի Թեհրանի և Թաւրիզի գործողները պէտք է պայմանաւորվեն վերցնելու իրանց վրա գործի ծանրութիւնը և առաջ տանելու նրան անձնուիրաբար։ Հաղորդակցութեան ճանապարհների բացակայութիւնը, անշուշտ, պէտք է արգելք դառնայ պարսկահայերի ներկայացուցիչների համար յաճախ մէկտեղ խմբվելու և արագ գործելու։ Բայց դա այն արգելքներիցն է, որոնք ժամանակաւոր բնաւորութիւն են կրում և էական չեն։ Գործին անկեղծ նուիրված անձինք կարող են ուժեղացրած աշխատանքով և եռանդով յաղթել շատ և շատ խոչընդոտների։

Պարսկահայերը պէտք է աչքի առաջ ունենան, որ իրանք պէտք է հոգան իրանց կրթութեան գործի վրա, որ պետութիւնը և իշխող պարսկական տարրը այնքան ուժեղ չեն, որ տան բաւարար կրթական հաստատութիւններ երկրին և ուրեմն հայերի վրա երկպատիկ պարտաւորութիւն կայ թէ ինքնակրթութիւնը առաջ տանելու և թէ օգտաւէտ լինելու պետութեան իր կրթութեամբ։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

XXII

Հոկտեմբերի 29-ին ռուսաց ինտէլիգէնցիան տօնեց յայտնի ռուս գրող Պեօտր Բօբօրիկինի գործունէութեան քառասնամեակը։

Որքան մեզ յայտնի է, Պ. Բօբօրիկինի գրուածքներից ոչինչ չը կայ թարգմանված հայերէն եւ նրանք ծանօթ են հայ ընթերցողների շատ նեղ շրջանի։

Այդ բացատրվում է ոչ միայն յոբելեարի տաղանդի չափով, այլ եւ այդ տաղանդի առանձնայատկութիւններով, որոնք բուն ռուս ընթերցողների մէջ էլ ունեն իրանց բազմաթիւ հաւանողները, բայց եւ նոյնպէս բազմաթիւ չը հաւանողները։ Մինչեւ վերջին ժամանակներս շատ շատերի կողմից նոյն իսկ չէր ընդունվում յոբելեարի տաղանդաւորութիւնը եւ միայն ներկայ յոբելեանը ակնյայտնի ցոյց տուեց, որ նա հաստատ կերպով գրաւել է իր տեղը ռուսաց գրականութեան մէջ։

Մեզ թւում է, թէ յոբելեարի գործունէութեան ամենաճիշդ գնահատութիւնը արտայայտված է «Կարօտ գրողներին եւ գիտնականներին նպաստող ընկերութեան» ուղերձում, որ կարդաց ընկերութեան նախագահ Ն. Միխայլօվսկի։ «Ձեր արձագանքատու (ОТЗЫВЧИВЫЙ) տաղանդի, ասված է այդ ուղերձում, ձեր լայն կրթութեան, ձեր անխոնջ գործունէութեան եւ մտաւոր շահերի բազմակողմանիութեան շնորհիւ դուք հանդիսանում էք մեր դարի երկրորդ կէսի նշանաւոր ռուս գրողներից մէկը։ Միայն շատ սակաւաթիւ տաղանդներին յատուկ սրատեսութեամբ դուք զննում էք ռուս հասարակական հոսանքները եւ տրամադրութիւնները եւ միշտ մէկն էք լինում առաջիններից, որոնք վերարտադրում են կեանքի նորածին երեւոյթները։ Շնորհիւ ձեր այդ ընդունակութեան՝ արտացոլացնել հասարակական կեանքի զանազան վայրկեանները՝ ձեր վէպերը, պատմածքները եւ դրամաները հանդիսանում են մի ամբողջ պատկերադարան ամենապէսպէս տիպերի եւ բնորոշ կերպարանքների։ Ձեր քննադատական եւ հրապարակախօսական յօդուածներում դուք նոյն զգայնութեամբ դէպի ամեն ինչ, որ նոր է, ծանօթացրել էք ռուս հասարակութիւնը արեւմտեան-եւրօպական գրական շարժման հետեւանքների հետ։ Այդ յօդուածներում դուք երեւան էք գալիս իբր լուրջ, գիտնականօրէն տրամադրված մտքի եւ լուսաւոր սկզբունքների մարդ»։

Այդ վերջին տեսակէտից՝ պ. Բօբօրիկին արժանի է համակրութեան ոչ միայն իր ընթերցողների, այլ եւ լայնատարած Ռուսաստանի ամբողջ ազգաբնակութեան, ուրեմն եւ հայ հասարակութեան կողմից։

Տ. Յ.

## ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

—

Յայտարարութիւններից իմացել էինք, որ հիւանդութեան պատճառով Թիֆլիսից մեկնող բարիտօն Սվիրիտենկօյի տեղ, որին ոչ մի անգամ չը լսեցինք, հրաւիրված է մեր հասարակութեան ծանօթ բարիտօն Կամիօնսկի, որը սրանից երկու տարի առաջ ունեցել է այստեղ մեծ աջողութիւն։ Կամիօնսկի եկաւ, եւ նրա համար նշանակվեց առաջին անգամ «Եւգենիյ Օնեգին», իսկ երկրորդ անգամ՝ «Դէմօն»։

Առաջին ներկայացման տոմսակները վաղօրօք սպառված էին։ Չայկօվսկու գլուխ գործոց «Եւգենիյ Օնեգին» օպերան գրաւել էր թատրօն մի մեծ հասարակութիւն։ Այս անգամ օր. Պապայեան չը կար բեմի վրա. յայտնի բան է, որ եկել էին Կամիօնսկուն լսելու, որը կատարում էր Օնեգինի դերը։ Մնացած գլխաւոր դերերը խաղում էին՝ Տատեանա—Կունցօվա, Օլգա—Գօրնօտ եւ Լենսկի—Էրնեստ։ Պէտք է ասել, որ Կամիօնսկի այս անսամբլի մէջ՝ իրաւամբ առաջին տեղն էր բռնում։ Նրա ներկայացրած Օնեգինը, կարելի է ասել, իսկ Պուշկինի ստեղծած տիպն էր։ Ոչ չափազանց փայլուն եւ հպարտ ջէնտլմէնին էք տեսնում, ինչպէս է Եակօվլեվ այս դերում, եւ ոչ բոլորովին ընկճված եւ անվստահ սիրահարի, ինչպէս Վիկտօրօվ։ Կամիօնսկի ցոյց է տալիս մի բարեկիրթ եւ խելօք երիտասարդի արժանաւոր վսեմութիւնը եւ ազնիւ Օնեգինի հոգեկան յուզմունքից առաջացած մելամաղձոտ բնաւորութիւնը։

Սկզբից, առաջին գործողութեան կվարտէտի առաջին բառերից «Ցոյց տուէք, ո՞րն է Տատեանան», արդէն երեւում էր, որ արտիստը շնորհալի դերասան է։ Երկրորդ պատկերի մէջ «միայն ձեզ կընտրէի հարսնացու» արիան երգեց մեծ հմտութեամբ եւ կրկնվեց։

Կամիօնսկի իր արտաքինով, դրամատիկական խաղով եւ երգի շկօլայով շատ ցանկալի արտիստ է մեր բեմի համար։ Նրա արժանաւորութիւններից գլխաւորն է՝ երգելու ձեւը, որ միշտ դիւրեկան է եւ արտասանութիւնը (դիկցիա), որով շատ որոշ է հնչվում ամեն մի բառ։ Ձայնը աւելի շուտ տենօրայնի բարիտօն է, քան զուտ բարիտօն, մանաւանդ բարձր եւ ուժեղ նոտաներում, իսկ մեղմ եւ ցածր ձայները աւելի թանձր եւ թաւշային են։

Հասարակութիւնն իր ծանօթ արտիստին ընդունեց ծափահարութեամբ եւ մատուցեց մի դափնեայ պսակ։ Թատրօնը լի էր։

Կարա-Մուրզա

## ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

—

Հոկտեմբերի 30-ին

Երկու տարի է Մօսկվայի հայերը փնտռում էին իրանց համար մի արժանաւոր քահանայ եւ չէին կարողանում գտնել։

Դրա համար նրանք այս երկու տարվայ ընթացքում մի քանի անգամ ծխականների ընդհանուր ժողովներ են գումարել եւ մինչեւ անգամ մի առանձին յանձնաժողով են ընտրել, որ նոյնպէս պարտաւոր է եղել զբաղվել Մօսկվայի հայերի համար արժանաւոր քահանայացուներ որոնելու դժուար եւ ծանրակշիռ հարցով։

Այդ յանձնաժողովը հոկտեմբերի 29-ի ծխականների ընդհանուր ժողովին յայտնեց, որ միայն մի հոգի կարող է առաջարկել ընդհանուր ժողովին քուէարկելու, որովհետեւ ուրիշ արժանաւոր քահանայացուներ նա չէ կարողացել գտնել։ Թէ որքան ճշմարիտ էր յանձ-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԲԱՂԴԱԴԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

—

Ունի՞ արդեօք այդ երկաթուղին նոյն նշանակութիւնը առեւտրի համար, կամ թէ կարող է նա փոխարինել Սուէցի անցքը,—այդ հարցի վերաբերմամբ դժուար է դրական պատասխան տալ։ Հազիւ թէ ունենայ։ Գոնէ անգլիացիները, որոնք այդպիսի հարցերում ամենից հեռատես են, այնչափ չընդդիմադրեցին գերմանացիներին տուած կոնցէսիային, որքան հարկաւոր էր սպասել, եթէ Սուէցին, որ նրանց առեւտրական ճանապարհն է դէպի Հնդկաստան, սպառնար վնաս։ Մի գերմանացի գրագէտ ասում է, որ Բաղդադի երկաթուղուց յետոյ Սուէցը երկրորդական դեր կը խաղայ. միւսը կարծում է, որ Բաղդադի երկաթուղին կը նախադասվի միայն թանգագին եւ թեթեւ ապրանքների համար, այնպէս որ ընդհանրապէս Սուէցի դերը մեծ փոփոխութիւն չէ կրելու։

Այս կարծիքը պէտք է աւելի ճիշդ համարել։ Ինչ վերաբերում է մասնաւորապէս Պարսկաստանին, ի հարկէ անգլիացիները շատ են կորցնում այդ երկաթուղու պատճառով. նրանք առանց այդ էլ օրէցօր աւելի եւ աւելի շուկաներ են կորցնում Իրանում յօգուտ ռուսների։ Այժմ արդէն, շնորհիւ Գերմանիայի, նրանք բոլորովին ստիպված կը լինեն հրաժարվել Պարսկաստանի առեւտրից։ Պարզ է նոյնպէս, որ քաղաքականապէս Բաղդադի երկաթուղին մեծ հարուած է Անգլիայի համար, որովհետեւ նա խլում է, գուցէ ընդմիշտ, հարաւային Փոքր-Ասիան եւ Միջագէտքը իր ազդեցութիւնից, եւ ինչպէս նորերս Ջէմս Բրայսը ասել էր Լեպսիուսին, Անգլիան առ այժմ եւ գոնէ մօտիկ ապագայի համար հրաժարվել է որ եւ է անմիջական ազդեցութիւնից Արեւելեան Թիւրքիայի վրա։ Միակ մխիթարութիւնը, որ գտնում են անգլիական հրապարակախօսները գերմանական աջողութեան մէջ, այն է, որ դրանով Ռուսաստանի ազդեցութիւնից ազատ են մնում յիշեալ երկիրները։

Հետաքրքրական է եւ Ռուսաստանի վերաբերմունքը դէպի գերմանական ձեռնարկութիւնը։ Վերջինն ամենից առաջ աւելի ուժեղ կերպով հաստատում է Ռուսաստանի իրաւունքները Փոքր-Ասիայի արեւելեան հիւսիսի եւ Հայաստանի վրա։ Հարաւային Փոքր Ասիան նրա համար կենսական հարց չէ կազմում. աւելի լաւ է նաւահանգիստ ունենալ Պարսից ծոցում, քան Միջերկրական ծովի վրա, որտեղից դուրս գնալ կարելի է միայն անգլիական դռներով—Գիբրալտար եւ Սուէց։ Հարցը հարուստ Միջագէտքի մասին է։ Բայց եւ այնպէս, գերմանացիները ստիպվեցին այս երկրի համար նշանաւոր կէտը—Դիարբէքիրը թողնել իրանց երկաթեայ գծից դուրս։

Բաղդադի երկաթուղին չէ էլ խանգարում Ռուսաստանին ցած իջնել Պարսկաստան Կովկասից կամ Անդրկասպեան երկրից, կամ միաժամանակ երկու կողմից։ Ասխաբադ-Խորասանի խճուղին, Ռեշտ-Ղազվինի, ինչպէս եւ Թաւրիզ-Համադանի ճանապարհները *), բոլոր այս ռուսական ձեռնարկութիւնները դէպի Պարսից ծոցն իջնելու սկիզբներն են։ Եթէ մինչեւ անգամ գերմանացիները բաւականանան Բաղդադի երկաթուղու ծայրը կազմող Բասրա քաղաքով, որը Եփրատի վրա է, այլ շարունակեն գիծը դէպի հարաւ մինչեւ Գուրուն նաւահանգիստը, այնու ամենայնիւ ռուսաց համար մնում են ազատ երկու նաւահանգիստներ—Բուշիր եւ Բենդեր-Աբբաս։ Ասում են, որ եթէ Ռուսաստանը կամենայ հասնել Բուշիր, նա կը գնայ երկաթուղով Երեւան-Թաւրիզ եւ այլն, իսկ եթէ կամենայ Բենդեր-Աբբաս, այն ժամանակ կը նախադասվի շարունակել Անդրկասպեան երկաթուղին դէպի հարաւ։ Այս երկու դիտաւորութիւններին Գերմանիան իր ձեռնարկութիւնով ոչ մի արգելք չէ կարող լինել։

Գ. Մ.—Կարապետեան

### ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԳԱՆՁԱԿՈՒՄ

—

Ընդամենը մի քանի տարի սրանից առաջ փաստաբանութիւնը Գանձակում այնքան սակաւ էր, որ շատերը իրանց գործերը դատարանում պաշտպանելու համար, ստիպված, հրաւիրում էին փաստաբաններ ուրիշ քաղաքներից, ծախսելով, ի հարկէ, ահագին գումարներ։ Ուրեմն զարմանալի չէ, որ այն ժամանակ ընդարձակ ասպարէզ էր բացված, այսպէս կոչված «փողոցային փաստաբանների» գործունէութեան համար, որոնք հարստահարում էին գլխաւորապէս խեղճ գիւղացիներին։ Այժմ փաստաբանների թիւը անհամեմատ աւելացել է. հիմա Գանձակում մշտապէս բնակվում են, պարապելով փաստաբանութեամբ, 7 երդուեալ հաւատարմատարներ, 2 օգնականներով եւ 4 մասնաւոր հաւատարմատարներ։ Բացի դրանից, պաշտպանում են քրէական գործեր եւ մի քանի անձինք, որոնք չեն հաշւում ոչ երդուեալ եւ ոչ մասնաւոր հաւատարմատարների շարքում։

Այսպէս, փաստաբանները կազմում են Գանձակում մի թիւ, որ աւելի քան բաւական է Գանձակի պէս աղքատ քաղաքի համար։ Այնու ամենայնիւ, փողոցային փաստաբանութիւնը մեզ մօտ չէ պակասում։ Ի՞նչ է այդ երեւոյթի պատճառը։ Անշուշտ այն, ինչ որ է ժողովրդի ուրիշ շատ դժբաղդութիւնների պատճառը, այն է ժողովրդի տգիտութիւնը։ Փողոցային փաստաբանութիւնը գոյութիւն ունի գլխաւորապէս այն պատճառով, որ ժողովուրդը տգէտ է, ուրիշ խօսքով նա գոյութիւն ունի ժողովրդի տգէտ մասի, գլխաւորապէս գիւղացիների համար, որովհետեւ աւելի զարգացած դասակարգը նրանից խուսափում է, հասկանալով գործի էութիւնը։

Թէ ինչ ահագին նիւթական եւ մասամբ բարոյական վնասներ են հասցնում ժողովրդին փողոցային փաստաբանները, այդ հարցը բա-

*) Թաւրիզ-Համադանի ճանապարհի մասին մի ժամանակ շատ էր խօսվում. չը գիտեմ, այժմ ինչ կէտի վրա է այդ հարցը։

